

Թիւնը, ընդունելով հանդերձ թէ նոյն ցուցակին մէջ յաւելումներ եղած կրնան ըլլալ: Անոնք որ զրջի մէկ հարուածով կ'ուզեն ջնջել հայկական վանական հաստատութիւնները, անոնց դէմ պաշտպանութեան իբր յենակէտ ցոյց կու տանք հայկական արձանագրութեամբ այն մոզայիքները որ կը տեսնուին քանի մը տեղեր Երուսաղէմի մէջ և Պաղեստինեան սրբազիրներու բաւական նշանակալից քանի մը ցուցումները: Առանց խօսելու Ս. Եւդիմէոսի վրայ, որ ծագմամբ հռովմէական կայսրութեան հաստատանցիներէն էր, և կը բնակէր իր վանքը, և չմանրամասնելով չորս հարիւր հայ ուխտաւորներու Յորդանանի այցելութիւնը, պէտք է յիշենք Ս. Սաբայի և Ս. Թէոդոսի նորահաստատ վանքերու հայալիզու վանականներու կարևոր հատուածները:

Այսպէս յանդգնութիւն մը չէ ուրեմն մտածել թէ խել մը հայկական կամ յունա-հայկական վանքեր կառուցուած են Ե. դարու վախճանին կամ Զ.ի ընթացքին. վանք մը և եկեղեցի մը նուիրուած էր Պետրոսի հառաչանաց, բարձր բլուրի մը արեւելեան զառիվայրին վրայ, Սելովամէն գրեթէ երեք նետընկէց հեռի (Եպիփան վանական): Պիտի ուղէինք գիտնալ թէ ի՛նչ տեսակ կապեր էին որ կը միացնէին այս վանքը Ս. Թէոդոսի վանքին հետ որ անկէ կը տեսնէին զայն, իբր պսակ լեռնային անապատի. վասն զի Երուսաղէմի մէջ մեծ անապատականին տօնը (11 Յունվար) կը կատարուէր Ս. Պետրոսի Առաքելորանին մէջ և Թէոդոսեան վանքին անունը գտնուած է բազիլիստեղեան անապատանի սկաւառակի մը վրայ զոր գտած է P. Germer-Durand պեղումներու ժամանակ: Յիշատակարանաց ներկայ վիճակը չի թոյլատրեր մեզի ստուգութեամբ հաստատել թէ այս յարաբերութիւնները սկսած էին հայ Սոփրոնիոսէն (✠ 543), որ Ս. Թէոդոսի առաջին յաջորդը և մեծ շինողն էր, Կիւրեղ Սկիւթուպոլսեցիին ըսածին համաձայն: Բայց պէտք չէ նոյն յարաբերութեանց հնութիւնը տարակոյսի տակ ձգել: Ս. Թէոդոսի վանական Մտտեստոսը՝ պարսից մեկնումէն յետոյ փութաց վերաշինել Հառաչանաց վանքը որ իր սրտին շատ մօտ էր: Ս. Յարութեան ծխատանը (Typicon) որ խաչակիրներէն գտնէ մէկ դար յառաջ գործադրելի էր, Աւագ Ուրբաթի հանդիսական թափօրի կայան մը ցոյց կու տայ հոն: Նոյն ծխատանէն յայտնի է այն եղականու-